

Զաքարիա Վանեցի, Կ. Պոլսոյ պատրիարքները :

Նաեւ Երուսաղէմի պատրիարքը՝ Գրիգոր Պարոնտէր, մշակած էր արեւմտեայց հետ խաղաղասիրական յարաբերութիւն. որուն վկայ է հետեւեալ դաշնագիրը 1620էն, զոր հրատարակած է Ս. Վ. Սամուէլեան (Բիւզանդիոն, 1899, Թ. 860), յայտնելով թէ տեսած է զայն «օտար բարեկամի մը քով, որ ոչ միայն հաճեցաւ իսկական օրինակը ցոյց տալ ինձ, այլ եւ օրինակ մըն ալ տուաւ լուսանկար» :

«Դաշնագրոյն ամէնէն վերը դրուած է երկաթագիր «է» մը, անկէ քանի մը տող վար նորէն երկաթագիր՝ ԹՎԻՆ ՀԱՅՈՅ ՌԿԹ ՄԱՐՏ ԱՄՍՈՅ եւն : Դիչ մը աւելի վար հայ եկեղեցականաց կնիքներն ու ստորագրութիւնները, իսկ թղթոյն աջակողմեան լուսանցքին վրայ վերէն վար դրուած են երեք կնիք եւ երեք ստորագրութիւն, որոց առաջինը դրած է Սուրիոյ Ֆրանսական ընդհանուր հիւպատոսը, որ այն ժամանակ Հալէպ կը նստէր. իսկ միւս երկուքն իրարու նման են եւ անընթեռնի, հաւանօրէն Ֆրանչիսկեանց ընդհանուր տեսչին եւ փոխանորդին պէտք են ըլլալ, Հայոց կողմէ կնքած է Գր. Պարոնտէր պատրիարքը. «Գրիգոր եպս. Ս. Երուսաղէմայ» . իսկ ուրիշ երեք եկեղեցականներ թէ՛ կնքած են եւ թէ ստորագրած, որք են՝ Պաշտօտուր եպոս., Առաջնորդ Վարազայ՝ Մարտիրոս Վրդ. եւ Ս. Էջմիածնի